Արձանագրություն N 2

Թիվ **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Լ-23/1** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով
ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար լուսարձակների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

03 մայիսի 2023թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Սեփոյան, Վ. Անդրեասյան, Ս. Գարանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Արպանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	**Լուսարձակներ**	15 000 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 28.04.2023թ.-ին ժամը 14:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 02.05.2023թ.-ին ժամը 14:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	**«Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ**	ՀՎՀՀ՝ 01053569, ք. Երևան, Մոլդովական փ. 48/1 25բն, GGEHOLDING@yandex.ru , հեռ. 077-66-65-66

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Լ-23/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Լուսարձակներ	**«Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ**	15 000 000	50000000	0 %	50 000 000	15000000	0 %	15 000 000	

Աճուրդն ամփոփվել է 02.05.2023թ-ին և Համակարգի կողմից

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ-ն,**

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց որ

1. Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝**

- Ներկայացված հավելված 1-ում (Դիմում-հայտարարություն) բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը: Դիմում-հայտարարության մեջ Ընկերության անվանումը ռուսերեն լեզվով գրված չէ:
- Ներկայացված չէ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ Հավելված 1.3:
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ լրացված չեն «ֆիրմային անվանում», «ապրանքային նշան», «մակնիշ», «արտադրողի անվանում» և «տեխնիկական բնութագիր» դաշտերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-L-23/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և 04.05.2023թ.-ին Համակարգի միջոցով ծանուցել **«Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները և շտկման վերջնաժամկետ սահմանել 05.05.2023թ.-ի ժամը 24:00-ն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 08.05.2023թ. ժամը 14:30-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. 08.05.2023թ. ժամը 14:30-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 08.05.2023թ. ժամը 14:30-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **«Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ-ն** սահնանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը: Սակայն, ներկայացված փաստաթղթերում ևս առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ներկայացված հավելված 1-ում (Դիմում-հայտարարություն) պատվիրատուի անվանումը սխալ է գրված՝ «ՀՀ քննչական կոմիտե»-ի փոխարեն գրվել է «Երևանի քաղաքապետարան»:
- Չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ համաձայն Հավելված 1.3-ի: Փոխարենը ներկայացվել է Իրական շահառուների վերաբերյալ լրացված հայտարարագիր, որը ստորագրված է Վարդանյան Լաուրայի կողմից, սակայն չի ներկայացվել տվյալ անձի վերաբերյալ լիազորագիր:
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ «ֆիրմային անվանում», «ապրանքային նշան», «արտադրողի անվանում» դաշտերում նշված է «Գ.Գ.Է. հոլդինգ»:

  Ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը ուղարկվել է պատասխանատու ստորաբաժանմանը՝ եզրակացություն տրամադրելու նպատակով:

  Համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը միանշանակ ընդունելի չէ (եզրակացությունը կցվում է):

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով շտկումից հետո պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը և այն հանգամանքը, որ շտկված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ **«Գ.Գ.Է. հոլդինգ»** ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. Տվյալներ՝ մասնակցի կողմից ներկայացված հայտի մերժման, ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշման և անգործության ժամկետի վերաբերյալ

12.05.2023թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 10-րդ կետի 2-րդ ենթակետի և ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

10.2 Հաստատել 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գագիկ Արշակյան

անդամներ՝ _____ Գևորգ Սեփոյան

_____ Վահրամ Անդրեասյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Սիրուշ Նազարյան